յինքն կամեսցի երիս ամիսս 'ի բանտի շղթայիւք կացցէ և գործ մեղաց և վճիռ մահու նորայ մացի առ ծայրագոյն յապարանն դատաստանի, և անտի առ ատեանն նախարարին, եթէ կարի լինիլ ներուցին մեղաց նորայ այլ յառաջ քան զերիս ամիսս, եթէ նախարարն մի բաշխեսցի կեանս նորայ ընդունելութեամբ տանն հայոց մեռցի։

ԳԼՈՒԽ ՄԻԴ.

Ոչ ոք դատապարտեալ 'ի մահ մի գտցէ կեանս բաշխեցեալ 'ի նախարարէն, բայց այն որ տունն հայոց ընդունիցէ նմա տալ կեանս, այլ այն որ ոչ ըստ վճռոյ հատեալ դատաստանէն մեռցի։

ԳԼՈՒԽ ՄԻԵ.

Մի՝ ոք դատաւորք դատապարտեսցի 'ի մահ բարկութեամբ վասն գործոց մեղաց մեղաւորին, այլ գթութեամբ, և մահ մեղաւորին վասն նշաւակի կենդանեաց, զի զսպեսցեն կենդանիքն վարքս իւրեանց 'ի չարագործութենէ։

ԳԼՈՒԽ ՄԻԶ.

Որում դպիր ատենաբան որ գտցէ հնարս զի ըստ Օրինօք զերծուսցէ մեղաւորն 'ի վճռոյ մահուանէ սիրեցեալ լինի ամենեցոյն։